Արձանագրություն N 2

«Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար «ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ՀՏ-ԳԼ-21/40» ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

Բացող և գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 20.08.2021թ. ժամը 11:00-ին էլեկտրոնային գնումների www.armeps.am կայքի միջոցով

Գնահատող հանձնաժողովի նախագահ (ԳԱՊ)՝

- Մ. Մկրտչյան

Հանձնաժողովի բացող անդամներ՝

- Հ. Մանուկյան
- Է. Կարապետյան

Հանձնաժողովի գնահատող անդամներ՝

- Կ. Դավթյան
- Դ. Զաքարյան

Քարտուղար՝ Էլինա Պողոսյան

Օրակարգ

1. «ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ՀՏ-ԳԼ-21/40» ծածկագրով ընթացակարգին էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով ներկայացված հայտերը:
2. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գին:
3. «ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ՀՏ-ԳԼ-21/40» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին:
4. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը.

1. «ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ՀՏ-ԳԼ-21/40» ծածկագրով ընթացակարգին էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով ներկայացված հայտերը

(Է.Պողոսյան)

1.1 «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ –ի կարիքների համար «համակարգչային տեխնիկա» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ՀՏ-ԳԼ-21/40» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակիցների անվանումը
1.	«Ակսել Գալստյան» ԱՁ
2.	«Դ-Քոմփանի» ՍՊԸ
3.	«ՋԻ ԷՄ ՊՐՈ» ՍՊԸ
4.	«ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ
5.	«Վանդիստ» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

1. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գին

(Է.Պողոսյան)

2.1 «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության և սույն ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները. Տե՛ս Հավելված N 1:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

3. «ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ՀՏ-ԳԼ-21/40» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝

Հ/հ	Գնման առարկա	Նախահաշվային պլանավորված գումարը	Մրցույթին մասնակցող կազմակերպությունների				
			Հ/հ	Անվանումները	Գնային առաջարկ/ՀՀ դրամ/		
					Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գին
1	Տեսակոնֆերանսի համակարգ	-	1	«Ակսել Գալստյան» ԱՁ	382 000	-	382 000
			2	«ՋԻ ԷՄ ՊՐՈ» ՍՊԸ	1 649 000	329 800	1 978 800
			3	«ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ	100 000 000	20 000 000	120 000 000
			4	«Վանդիստ» ՍՊԸ	2 665 825	533 165	3 198 990
2	Մոնիտոր		1	«ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ	100 000 000	20 000 000	120 000 000
3	Անխափան սնուցման սարք 1500		1	«ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ	100 000 000	20 000 000	120 000 000
4	Անխափան սնուցման սարք 2000		1	«ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ	100 000 000	20 000 000	120 000 000
5	Անխափան սնուցման սարք 3000		1	«ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ	100 000 000	20 000 000	120 000 000
6	Անխափան սնուցման սարքի մարտկոց	-	1	«Դ-Քոմփանի» ՍՊԸ	242 500	48 500	291 000
			2	«ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ	100 000 000	20 000 000	120 000 000
7	Մկնիկ	-	1	«ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ	100 000 000	20 000 000	120 000 000
8	Ստեղնաշար		1	«ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ	100 000 000	20 000 000	120 000 000
9	WiFi ռոուտեր	-	1	«ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ	100 000 000	20 000 000	120 000 000
10	Համակարգչային պլանշետ	-	1	«ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ	100 000 000	20 000 000	120 000 000

ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին:

(Է.Պողոսյան)

3.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը էլեկտրոնային գնումների **Armeps (www.armeps.am)** համակարգի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի.

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են, ***բացառությամբ ներքոհիշյալ դեպքերի.***

«ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ հրավերով պահանջող փաստաթղթերը և պարզվել է, որ դրանցում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

- ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ կողմից հայտով ներկայացված փաստաթղթերում բացակայում էր ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (Հավելված 1.1):

Անհրաժեշտ է ներկայացնել հրավերով պահանջվող փաստաթղթերը:

2.3 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են **«ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ՀՏ-ԳԼ-21/40»** ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, ***բացառությամբ ներքոհիշյալ դեպքերի.***

- **«ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ** կողմից ներկայացված գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1) հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Անհրաժեշտ է ներկայացնել հրավերով պահանջվող փաստաթղթերը հաստատված՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

- **«Դ-Քոմփանի» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված՝ հրավերով պահանջող փաստաթղթերը և պարզվել է, որ դրանցում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված 1.1)՝

- **6-րդ չափաբաժին՝** «Անխափան սնուցման սարքի մարտկոց» ապրանքատեսակի տեխնիկական բնութագրում նշված է «Մարտկոցի աշխատանքային լարումը, V 12 կամ համարժեք », «Տարողություն C20, Ah 9 կամ համարժեք», «AGM տեխնոլոգիա կամ համարժեք», «Տերմինալներ F2 (ֆաստոն) 6.3 մմ կամ համարժեք», «Երկարությունը 151 մմ կամ համարժեք», «Լայնությունը 65 մմ կամ համարժեք, «Բարձրությունը՝ առանց տերմինալների 94 մմ կամ համարժեք, «Բարձրությունը, ներառյալ տերմինալները 100 մմ կամ համարժեք», «Քաշը՝ 2,20 -2,70 կգ կամ համարժեք»:

Անհրաժեշտ է 6-րդ չափաբաժնի մասով Ձեր կողմից ներկայացված առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը հստակեցնել բացառելով **«կամ համարժեք»** արտահայտությունը:

- **«Ակսել Գալստյան» ԱՁ**-ի կողմից ներկայացված՝ հրավերով պահանջող փաստաթղթերը և պարզվել է, որ դրանցում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված 1.1)՝

- 10-րդ չափաբաժին՝ «Համակարգչային պլանշետ» ապրանքատեսակի տեխնիկական բնութագրում նշված է «Էկրանի տեսակը՝ Liquid Retina IPS LCD կամ համարժեք», «Էկրանի բանաձևը՝ /1640-1800/ x /2360-2500/ կամ համարժեք», «Էկրանի չափը ՝10-15 inch կամ համարժեք», «Տեսախցիկներ՝ Դիմային տեսախցիկ առնվազն 7 MP կամ համարժեք», «Հիմնական տեսախցիկ առնվազն 12 MP կամ համարժեք», «Պրոցեսորների միջուկների քանակը՝Hexa-core կամ համարժեք, «Պրոցեսոր՝Apple A14 Bionic կամ հարաժեք, «Օպերատիվ հիշողություն՝առնվազն 4 GB կամ համարժեք», «Հիշողություն՝ առնվազն 64 GB կամ համարժեք», «Մարտկոցի հզորությունը՝7606mAh կամ համարժեք», «Կշիռ՝400-500 գ կամ համարժեք», «Հաստություն՝5-7մմ կամ համարժեք», «Երկարություն՝230-260 մմ կամ համարժեք» և «Լայնությունը՝ 175-220մմ կամ համարժեք»

- լրացված չէ ապրանքային նշան, մինչդեռ սույն ընթացակարգի հրավերով պահանջվել է լրացնել ապրանքային նշանի մասին տեղեկություն:

Անհրաժեշտ է 10-րդ չափաբաժնի մասով Ձեր կողմից ներկայացված առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը հստակեցնել բացառելով «կամ համարժեք» արտահայտությունը և ապրանքային նշան սունյակում լրացնել հրավերով պահանջվող տեղեկատվությունը:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել «Ակսել Գալստյան» ԱՁ-ին, «Դ-Քոմփանի» ՍՊԸ-ին և ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները, իսկ իսկ շտկված տարբերակն ուղարկել elinapoghosyan@yandex.com էլեկտրոնային հասցեին:

Հանձնաժողովի քարտուղարը նույն օրը էլեկտրոնային եղանակով **«Ակսել Գալստյան» ԱՁ-ին, «Դ-Քոմփանի» ՍՊԸ-ին և ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ** ուղարկեց արձանագրված անհամապատասխանությունները շտկելու մասին ծանուցումները:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը.

(Է.Պողոսյան)

4.1 Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության ուսումնասիրությունը վերջացնելու օրվան հաջորդ աշխատանքային օրվա ժամը 10:30-ին, «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ի շենքում, ք. Երևան, Արմենակյան 153 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Մ. Մկրտչյան

հանձնաժողովի անդամներ՝ _____ Հ. Մանուկյան

_____ Է. Կարապետյան

_____ Դ. Զաքարյան

_____ Կ. Դավթյան

հանձնաժողովի քարտուղար՝ _____ Է. Պողոսյան